



Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Մտեղծագործական համայնքներ
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առևտ նյութը առեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

ՄԵՍՐՈՊԵԱՆ ՀԵՄԱՐԱՆ

ԵՐԵՎԱՆ, ԳԻՏԵՐՈԹԻԿ ԾՐ ՅԵՐԵՎԱՆԸ

•ԼԻՊԷ (ԹՈՒԼԿԱՐԻԱ)

20772

ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶ, ՆԱԽԱՐԹԱՐԱՆ
ԿՐԹԱՐԱՆ ԵՒ ՈՒՍՈՒՄՆԱՐԱՆ

ՃԻՄՆԱԿԱՐԱՎ 1923 թ.

Հիմնադիր-Տնօրին

ԳԵՐՈԳ ՄԵՍՐՈՊ

ՅԱՅՏԱԳԻՐ ԵՒ ԿԱՆՈՆԱԳԻՐ

1924—1925

373
Մ-64

Տպագր. Յ. Մ. Սեբեան

Կ. ԹՈՒԼԵՍ

1924

ՅԱՅՏԱԳԻՐ

ԵԿ

ԿԱՆՈՆԱԳԻՐ

ՄԵՍՐՈՊԵԱՆ ՃԵՄԱՐՁԱՆԻ

2010

02

373
Մ-64

ՄԵՍՐՈՊԵԱՆ ՃԵՄԱՐԱՆ

ԵՐԿՍԵՐ, ԳԻՇԵՐՕԹԻԿ ԵՒ ՑԵՐԵԿԵԱՅ

Ֆիլիպէ, ուլ, Քիրիլ - Նեֆարիկն քիւ 5

Մ Ա Ն Կ Ա Պ Ա Ր Տ Է Զ
ՆԱԽԱԿՐԹԱՐԱՆ, ՈՒԾՈՒՄՆԱՐԱՆ

ՀԻՄՆՈՒԹՅ 1922 ԻՆ

Հիմնադիր-Տնօրիչն

Գ Է Ո Ր Գ Մ Ե Ս Ր Ո Պ

→→→○○●●●

ՅԱՅՏԱԳԻՐ ԵՒ ԿԱՆՈՆԱԳԻՐ

1924—1925

9591

ՏՈԱԳԻՐ. Յ. Մ. ԱԷԹԵԱՆ

Կ. ՊՈԼԻՍ

1924

ՄԵՍՐՈՊԵԱՆ

ՃԵՄԱՐԱՆ

ԵՐԿՐՈՒԹԻՒԿ ԳԻՇԵՐՈԹԻԿ ԵՒ ՑԵՐԵԿԵԱՅ

ՃԵՄԱՐԱՆԻ ՆՊԱՏԱԿԸ

Ամէն հայու սրտի բաղձանքն ու ըմբռնած ճըշմարտութիւնն է թէ արտասահմանի Հայութիւնը պէտք է մնայ հայ, բառին գեղեցիկ իմաստովը: Ցեղին գոյութեան պահպանումը անհրաժեշտ կը դարձնէ գուրգուրանք մեր ցրուած, վայրավատին ժողովուրդի բեկորներուն վրայ: Յայտնի իրողութիւն է որ հայրենի սահմաններէն հեռու տարտղնած այս հայութիւնը ամէնէն աւելի ենթակայ է ծուլումի եւ կորուստի: Ուրեմն աւելի ճիզ ու աշխատանք անհրաժեշտ է այդ մեծ վտանգին դիմագրաւելու համար:

Օտար երկրի մէջ ուր բաղաքակրթութիւնը աւելի ներոյժ, կրթական սիսթէմները աւելի խնամուած, տընտեսական կեանքն ու պայքարը աւելի զօրեղ են, հայ մնալու համար շատ աւելի անհրաժեշտ է ծեռքի տակ ունենալ հնարաւոր քոլոր միջոցներ:

Արտասահմանի մէջ՝ հայը, իր ինքնութիւնը չկորսնցնելու համար, հարկ է որ սերտ կապերով զօդուած ըլլայ մայր Հայրենիքին, ամուր կառչի իր հայրենի աւանդութիւններուն, սովորութիւններուն ու բարքերուն: Հայ լեզուն ու կրօնը, հայ գրականութիւնն ու պատմութիւնը, հին յիշատակները, փառքերն ու պարտութիւններու յոյզը իսկ ժառանգութիւնն են զոր ունին չորս հովերուն ցրուած Հայերը, եւ այդ ժառանգու-

37704-4.3

Յ. Մ. ՍԵԹԵԱՆ

ՏՊԱՐԱՆ

ԿԱԶՄԱՏՈՒՆ

Թ. Ղ. ԹԱՎԱՃԱՌԱՏՈՒՆ

Կ. ՊՈԼԻՍ, ԶԱՔՄԱՔՉԵԱՐ,

№ 36

(2660)
Կ7



10510-57

թեան պահպանումով միայն պիտի կրնան յաւերժացընել իրենց հայեցի նկարագիրը:

Այդ ժառանգութիւնը, հայ ոգին ու նկարագիրը, ո՞ւր աւելի կարելի է անազարտ պահպանել ու աւանդել յաջորդ սերունդներուն, քան Հայ Դպրոցին մէջ: Իսկ հայ դպրոցներուն մէջ, ցեղային նկարագրի տեսակէտով, ամէնէն աւելի միջնակարգ վարժարանն է որ կոչուած է տեւական ու բարերար դեր կատարելու:

Սյառհանդերձ Հայը արտասահմանի մէջ ստիպուած է որոշ չափով յարմարիլ միջավայրին, կարենալ ապրելու համար իբրև մարդ: Հետեւաբար Հայ Դըպրոցը օտար հողի վրայ, պարտաւոր է հայ ոգիի ու նկարագրի հետ տալ հայ տղուն նաեւ կեանքի պայքարին մէջ յաջողելու ընդունակութիւնն ու միջոցները:

Սհա մեր վարժարանի գոյութեան ծնունդ տուող ազդակները եւ նպատակը:

Ուրեմն ձեմարանը հաստատելով մեր նպատակը եղած է

ա) Պատրաստել իսկական Հայեր, ուսած կրօնական-բարոյական դաստիարակութեամբ, որ կարենան պահպանել հայ ընտանիքան հնաւանդ պարկեշտութիւնը, կրօնասիրութիւնը, առաքինութիւնները: Զանալ որ դառնան անոնք կատարեալ անհատներ, մաքուր եւ ուղիղ կենցաղի տէր:

բ) Մշակել ու զարգացնել անոնց դիրքը, տալով անհրաժեշտ ժանօթութիւններու պաշարը կեանքի պայքարին մէջ յաջողելու համար:

գ) Պահպանել ու զօրացնել անոնց առողջութիւնը, մարմնական առողջ դաստիարակութեամբ:

ՈՒՍՄԱՑ ՄՐԱԳԻՐ

Ճեմարանս ունի ուսումնական չորս շրջան.

Ա. Մանկապարտէզ:

Բ. Նախակրթարան:

Գ. Կրթարան:

Դ. Ուսումնարան:

Ա. ՄԱԿԱՐԱԳՈՒՅՑ

(2 տարի)

Չորսէն վեց տարեկան մանուկներ կ'ընդունուին ձեմարանի մանկապարտէզը, ուր երկու տարուան շրջանի մը մէջ պիտի զարգացուին անոնց բոլոր ընդունակութիւնները վերջին մանկավարժական մեթոդներով: Հոն խաղալիկներու, խաղերու, երգերու, ձեռական աշխատանքներու միջոցաւ պիտի աշխատուի զարգացնել տղոց մէջ բնական կարողութիւնները, զարգացնել անոնց զգայարանքները, եւ մղել զանոնք ինքնաշխատութեան:

Բ. ՆԱԽԱԿՐԹԱՐԱՆ

(4 տարի)

Այս չորս տարուան (7—11 տարեկան) շրջանին նպատակն է շարունակել մանկապարտէզի սկսուած գործը, զարգացնել տղուն զգայարանները, վարժեցնել զայն դիտելու եւ արտայայտելու: Այս շրջանին՝ հիմը կը դրուի իր մայրենի լեզուին:

Նախակրթութիւնը հիմը կազմելով ապագայ կը թական շրջաններուն, մասնաւոր հոգածութեան առարկայ է տղոց այս շրջանը, ուր կը հիմնաւորուին

բարոյական, իմացական եւ ֆիզիքական դաստիարակութիւնները:

Նախակրթարանի մէջ կ'աւանդուին.

Կրօնագիտուրիւն եւ բարոյագիտուրիւն:

Հայերէն լեզու, վայելլախօսութիւն, ընթերցանութիւն, բառագիտութիւն, ուղղագրութիւն, շարադրութիւն:

Պուլկարերէն, երկրորդ տարիէն սկսեալ, ընթերցանութիւն, գիր, բառագիտութիւն, ուղղագրութիւն, պուլկար հայրենացիտութիւն, պուլկար պատմութիւն:

Ֆրանսերէն, երրորդ տարիէն սկսեալ, գիր, ընթերցանութիւն, ուղղագրութիւն, քերականական պարզ ծանօթութիւններ:

Ազգ. պատմուրիւն, հայկական աւանդավէպեր, ազգ. եւ օտար դէմքեր, աւանդական պատմութիւնն սկիզբէն մինչեւ մեր օրերը:

Հայրենագիտուրիւն, աշխարհագիտուրիւն, շրջապատը, հայ գաղութները, —Հայաստանի աշխարհագրութիւնը, —Եջմիածին եւ հայ եկեղեցին, հայ կաթոլիկներ եւ հայ բողոքականներ, Հայաստանի Հանրապետութիւնը եւ իր բաղաքացիական օրէնքները.

Թուաբանուրիւն եւ գործնական երկրաշափուրիւն:

Իրազնուրիւն, բնական պատմութեան իրագիտութեան տարրական ծանօթութիւններ:

Գծագրուրիւն, գեղագրուրիւն:

Երգ, երաժշուրիւն:

Չեռագործ, ձեռային աշխատանի:

Շուկական մարզան:

Գ. Կ Բ Թ Ա Բ Ա Ն

(Յ ՏԱՐԻ)

Կրթարանի երեք տարուայ շրջանին կ'աւանդուին հետեւեալ ուսումները.

Կրօնէ. Համառօտ պատմ. հայ եկեղեցւոյ, հայ եկեղեցին հաւատալիքներն ու կազմակերպութիւնները, —հայ միւս եկեղեցիները. — եկեղեցւոյ ա. երեք տիեզերական ժողովները, քրիստոնէական միւս եկեղեցիները, համառօտ ծանօթութիւններ:

Հայ լեզու աշխարհաբար եւ գրաբար, հայ գրականութեան պատմութենէն ծանօթութիւններ:

Պուլկարերէն լեզու, Պուլկար Պատմութիւն եւ Աշխարհագրութիւն, Պուլկար Գրականութենէն ծանօթութիւններ:

Ֆրանսերէն լեզու:

Ազգային պատմուրիւն, երկիրը, Ուրարտուցիները. —Հայերը եւ Մարերը, Պարսիկները. — Տիրիթ—Մեծն Խոսրով եւ Տրդատ. — հայ դիցաբանութիւն. — հայ ընկերութեան կազմը. — Գողթան երգեր. — Քրիստոնէութեան գրի գիւտը, պատմական դէպքեր մինչեւ մեր օրերը. — հայ գաղութները եւ իրենց պատմութիւնը:

Ընդի. պատմուրիւն, Արեւելեան ազեր, Յունաստան, Հռոմ, միջին դարեր, նոր եւ արդի ժամանակներ: Սլաւ ցեղը. — Պուլկար ժողովուրդը, ծագումը եւ զարգացումը:

Աշխարհագրուրիւն, հինգ աշխարհներ, բնական, բաղաքական, տնտեսական:

Ուսողուրիւն, երկրաշափուրիւն, երկրաշափական գծագիտուրիւն:

Գիտուրիւն, բնական պատմութիւն, մարդակազ-

մութիւն, երկրաբանութիւն (ժանօթութիւններ) Տար-
րաբանութիւն, բնագիտութիւն:

Գծագրութիւն, նկարչութիւն, գեղագրութիւն:

Երգ, ձայնագրութիւն, գործիական երածութիւն
(կամաւոր): Մարզական շուրջական մարմամարզ:

Դ. Ա Խ Ս Ո Ւ Մ Ն Ա Ր Ա Ն

(5 տարի)

Կրթարանի ընթացաւարտները միայն կրնան մըու-
նել ուսումնարանի կարգերը, ուր պիտի աւանդուին
միջնակարգ կրթութեան ուսումներուն հետ հայ բա-
ղաբակրութեան պատմութիւն, հայ բննական եւ դիտա-
նագիտական պատմութիւն, կրօներու պատմութիւն եւ լւ.:

Դ Պ Ր Ո ՑԻ Ն Տ Ա Ր Ե Ց Ո Յ Ց Ը

1.—Վարժարանը կը բացուի ամէն տարի սեպտ.
մէկին յաջորդող թշ. օրը եւ կը փակուի Յունիսի մէջ:

2.—Մուտքի քննութիւնները տեղի կ'ունենան
սեպտ. մէկի յաջորդող առաջին եօ. եւ ուր. օրերը:

3.—Կանոնաւոր դասախոսութիւնք կ'ակսին սեպ-
տեմբեր 1-10ին:

4.—Բացի կրթ. նախարարութեան որոշած ու
պարտադրած օրերէն, վարժարանը կը փակուի

Դեկտեմբեր 25էն Յունիսը 7,

Բարեկենդանինախորդ դ. օրէն մեծ պահոց Դ. օրը,
Մաղկազարդէն մինչեւ Զատիկ Գ. օրը,

եւ հայ ազգային մեծ տօներուն:

5.—Գիշերօթիկներու համար վարժարանը կ'ունե-
նայ ամսական արձակուրդ 3—5 օր, եթէ հնարաւո-
րութիւն ունին իրենց ծնողաց կամ պաշտպանին մօտ
երթալու:

ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹԵԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐ

1.—Գիշերօթիկ աշակերտները կը վճարեն, ուս-
ման, սնունդի եւ բնակութեան համար՝

Ամսական Նախակրթարանի մէջ	1400 լէվա
Կրթարանի	»

2.—Յերեկօթիկները կը վճարեն ուսման համար Մանկապարտէզի եւ նախակրթարանի մէջ 150 լէվա	
Կրթարանի մէջ	200 »

3.—Կես-գիշերօթիկները (demi-pension) ուսման, սնունդի համար կը վճարեն՝

Մանկապարտէզի եւ նախակրթարանի մէջ 550 լէվա
Կրթարանի մէջ 600 »

4.—Մուտքի համար մասնաւոր գումար մը կը գան- ձուի իւրաքանչիւր աշակերտէ՝

Յերեկօթիկներէ 100 լէվա
Գիշերօթիկներէ 200 »

5.—Վճարումները պէտք է ըլլան կանխիկ երեք մասնավճարով. ա) Սեպտ. 4-10ին, թ) Յունիսը 8-10, գ) Մայիս 1-5. Կանխիկ ըլմարող աշակերտներ դասե- րուն չեն կրնար մասնակցիլ:

Հարցառների եւ արդուկի համար գիշերօթիկները
պարտին վճարել նաև տարեկան 100 լէվա:

6.—Դասագիրքերու, դպրոցական եւ այլ պիտոյք- ներու, հիւանդութեանց պարագային՝ բժիշկի, գեղե- րու եւ մասնաւոր սնունդի վերաբերեալ ծախքերը կը պատկանին ծնողաց:

8.—Անգիտերէն, գերմաներէն եւ ուրիշ մասնաւոր դասեր առնողները պիտի վճարեն առանձինն:

9.—Գործիական երաժշտութեան, դաշնակի, զութակի, մատոլինի եւ ուրիշ մասնաւոր դասեր առնողները պարտին վճարել տարեկան 1500 լէվա, 3 վճարումով:

10.—Իւրաքանչիւր տարեշրջանի վերջերը, մինչեւ Յունիս 30, ձնողը պարտին յաջորդ տարեշրջանի համար կանխաւ արձանագրել իրենց որդուց անունները, ցորեկեաներուն համար 200, զիշերօթիկներու համար 500 լէվայի կանխավճար մը ընկով, որ կը հաշու Սեպտեմբերի սկիզբը տեղի ունենալիք մասնավճարին:

11.—Կանխավճարը եւս չտրուիր եթէ աշակերտ մը արձանագրուելէ ետք յաճախէ վարժարան Նոր շրջանին:

12.—Թերահաշիւ վճարում, ինչպէս նաև հիւանդութեան կամ ուրիշ ու եւ է պատճառով տեղի ունեցած բացակայութեանց համար թոշակէ գեղջ ըլնդունուիր: Նոյնպէս զեղջ ըլնդունուիր եթէ վարժարանը հարկեցուցիչ պատճառով մը, օրինակ՝ համաճարակի մը առթիւ, առժամապէս փակուի:

13.—Եթէ զիշերօթիկ աշակերտ մը ուզէ Ծննդեան, Բարեկենդանի կամ Զատկի վագանսները անցնել վարժարանին մէջ, պարտի 700 լէվա վճարել իւրաքանչիւր արձակուրդի համար:

14.—Ո եւ է աշակերտ երբ տարեշրջանի որոշուած օրէն ուշ մոտնէ վարժարան, պարտաւոր է վճարել ամբողջ սակը, զեղջ չի կրնար պահանջել:

15.—Ամէն զիշերօթիկ պարտաւոր է ունենալ Ֆիլիպէի մէջ. պաշտպան մը, կամ ձնողը, որուն հարկ եղած ժամանակ կարենայ դիմել Տնօրէնութիւնը:

16.—Նորեկ աշակերտները պարտին ներկայանալ ձնողած կամ պաշտպանին հետ եւ ներկայացնել ձննդեան եւ պատուաստի վկայական:

17.—Ծնողը մը կամ պաշտպան մը որ իր զաւակը կը յանձնէ վարժարան իրեւ աշակերտ, ընդունած կը համարուի ներկայ Յալտագիր-կանոնագիրին բոլոր պայմանները:

ԳԻՇԵՐՕԹԻԿՆԵՐՈՒ ԽՆԱՄՔԸ

Վարժարանս զանք չի խնայեր որպէս զի գիշերօթիկ աշակերտները վայելեն ընտանեկան խնամք եւ հանգստութիւն: Մասնաւոր հոգածութեան առարկայ կ'ըլլայ աշակերտներու առողջութիւնը, հոգ կը տարուի անոնց բարեկրթութեան ու կենցաղագիտութեան, տալով միանգամայն բաւարար, առատ ու լաւ մնունդ:

Մասնաւոր մնայոն ներքին տառցիչ մը կը հսկէ զիշերօթիկներու ընտանեկան կեանքին վրայ, կ'առաջնորդէ զանոնք սերտողութիւններու միջոցին, կ'ընկերանայ անոնց պայուտնելու ատեն եւլն.:

Գիշերօթիկ ամէն աշակերտ եւ աշակերտուի առտնին գործերու մէջ բաժին մը կ'ունանայ մասնաւոր անձի մը հսկողութեան ներքեւ, եւ իրենց գործերուն տիսակը ամէն ամիս փոխուելով առտնին գործերու զանազան նիւղերուն գործնականալէս կը ծանօթանան:

ԳԻՇԵՐՕԹԻԿՆԵՐՈՒ ՊԻՏՈՅՔՆԵՐԸ

Գիշերօթիկները իրենց հետ բերելու են.

1 երկաթ մահճակալ 80×180 սանթ. մհծութեամբ:

1 անկողին նոյն մեծութեամբ:

2 բարձ:

2 զերմակ եւ 4 սաւան վերմակի, օղակով:

4 սաւան անկողնի:
4 բարձի երես:
3 երեսի, 3 սեղանի անձեռոց:
1 ծածկոց անկողնի (պաթանիէ):
3 ծեռք զգեստ ճերմակեղէն, բաղնիքի անհրաժեշտ
վարշամակ (փէշտիմալ):
2 գիշերնոց:
8 զոյգ գուլպայ:
2 տուզին թաշկինակ:
1 հողաթափ:
Բոլոր ճերմակեղէնները պէտք է թուազրեալ կամ
նշանատառով որոշուած ըլլան:
Տեսնել նաև կարգապահական կանոններու 14
յօդուածը:

ԲԺՇԿԱԿԱՆ ՔՆՆՈՒԹԻՒՆ

Վարժաբանը ունենալով իր մնայուն քժիշկը, տարին երեք անգամ պարտաւորիչ քժշկական քննութեան կ'ենթարկէ աշակերտները. ա) տարեմուտին, բ) Ծնունդի վագանաւէն յետոյ վերամուտին, գ) տարեվերցին: Իսկ եթէ հարկեցուցիչ պատճառներ ըլլան, օրինակ քաղաքին մէջ տարածուած ո եւ է տարափոխիկ հիւանդութիւն, մասնաւոր ընկանալիք կո կատարուի:

Ցերեկեայ և զիշերօթիկ ու և է աշակերտի հիւանդութեան պարագային՝ վարժարանի բժիշկին կողմէ առաջին այցելութիւնը կը տրուի ձրի:

ԱՇԱԿԵՐՏՆԵՐՈՒՄ ՏԱՐԱՁՈՅ

Ամէն աշակերտի համար պարտաւորիչ է ձեմա-
րանի յատուկ տարազը, որ կը բաղկանայ աղջկանց
համար հետեւեաններէն.

1. Գոզնոց համագոյն եւ համաձեւ (սեւ սաթթենէ):
 2. Մարմնամարզի համար ճերմակ կտաւէ բանկոնակ մը (միտի-պլաուզ) եւ սեւ սաթենէ վարտիք մը (պլումուր):
 3. Համազգեստ մը ծմբուռւան համար լազուարթ գոյնով բաղկացած մէկ կիսազգեստէ (յորօն), մէկ բանկոնակէ (blouse) եւ մէկ բանկոնէ:
 4. Ամառուան համար ճերմակ կտաւէ շրջազգեստ մը:
 5. Գլխարկ մը լազուարթ գոյնով կերպասէ՝ ծմբուռւան համար, ճերմակ կտաւէ՝ ամառուան համար:
 6. Մէկ զոյգ սեւ կօշիկ եւ մէկ զոյգ մարզանքի կօշիկ:
 7. Գլխարկին եւ համազգեստին վրայ պարտաւորիչ են ճեմարանի նշանատառերն ու ժապաւէնը:
 - Մանչերու համար.
 1. Համազգեստ մը լազուարթ կերպասէ բաղկացած 3 կտորէ (տաքատ, բանկոնակ, բանկոն), ծովային համազգեստի կոճակներով:
 2. Գլխարկ մը լազուարթ կերպասէ, ծովային, եւ ճեմարանի նշանատառով:
 3. Մէկ զոյգ սեւ կիսակօշիկ եւ մէկ զոյգ մարզանքի կօշիկ:

ԿԱՐԳԱՊԱՀԱԿԱՆ ԿԱՆՈՆՆԵՐ

1.—Աշակերտները պարտաւոր են ճշդապահ ըլլալ եւ ներկայ գտնութիւն ժամանակին: Բանաւոր պատճառով բացակայութիւնները կրնան արդարանալ միայն ծնողաց կամ պաշտպանին միջոցաւ: Դասը չաւարտած ու եւ է գործով դպրոցին մեկնիլ արգիլուած է:

2.—Եթէ աշակերտ մը յաճախակի յապաղումներ եւ բացակայութիւններ ունենայ, անօրէնութեան կողմէ դիտողագիր կը զրկուի ծնողաց կամ պաշտպանին:

3.—Աշակերտները պարտին յոյժ քաղաքավար կերպով ու յարգանքով վարութիւններուն եւ ուսուցչութիւններուն եւ դպրոցի պաշտօննեաններուն հանդէպ: Պարտաւոր են յարգանքով բարեւել զանոնք թէ դպրոցին մէջ եւ թէ՛ դուրսը, ո՞ւր ալ հանդիպին:

4.—Պարտաւոր են ընդփոյթ եւ հաճոյքով կատարել անոնց բոլոր պատուէրները:

5.—Աշակերտութիւններն ու աշակերտները պարտին պարզ եւ անսեթեւեթ կերպով սանտրել իրենց մազերը, առանց հոտաւէտ բայրերու:

6.—Արգիլուած է աղջկանց համար բարձր կրոնկով կօշիկ հագնիլ ու կրել թանկագին օլ, մատանի, պարարանջան:

7.—Արգիլուած է բոլոր աշակերտներուն իրենց մօտ պահել դրամ, եւ դասագիրքերէն ու դպրոցական առարկաներէն զատ ոնեւէ գիրը կամ առարկայ բերել դպրոց:

8.—Գիշերօթիկ աշակերտներուն դրամները պահ կը դրուին Տնօրէնութեան մօտ:

9.—Գիշերօթիկները իրենց ծնողաց հետ թղթակցելու առթիւ պարտին իրենց նամակները զոց պահա-

րանի մէջ դրած յանձնել Տնօրէնութեան, որ կը դրկէ թղթատարութեան: Իրենց ծնողներէն եւս եկած նամակները պէտք է ուղղուած ըլլան Տնօրէնութեան, որ կը յանձնէ զանոնք իրենց տէրերուն:

Ուրիշ միջոցաւ նամակ զրկել եւ ստանալ արգիլուած է:

10.—Գիշերօթիկ աշակերտները պարտին ճշգիւ հետեւիլ իրենց բունի, զարթնումի, յարդարանքի, մաքրութեան, ճաշերու, զրուանքի եւն. յատուկ պահացոյցին:

11.—Գիշերօթիկներու համար անձնական գործով շաբաթը մէկ անգամէ աւելի քաղաք իջնել արգիլուած է:

12.—Ամէն կիրակի եւ տօն օրեր գիշերօթիկները պարտաւոր են եկեղեցի երթալ, ընկերակցութեամբ իրենց ներքին ուսուցչին:

13.—Ամէն աշակերտ տարին երկու անգամ, Ս. Ծընունդին եւ Ս. Զատկին, պարտաւոր է խոստովանիլ եւ հաղորդութիւն:

14.—Գիշերօթիկ աշակերտները պարտին ունենալ նաեւ

1 Ակռայի վրձին եւ օճառ,

1 Խոզանակ զգեստի, 1 խոզանակ կօշիկի,

1 Սանտր,

1 Պարկ աղտոտներու համար,

1 Մրիչ ոտքի,

1 Մրատ,

1 Փոքր հայելի,


1 Փոքր սնտուկ անկողնին քով դրուելու համար:

15.—Ամէն աշակերտ պարտի ունենալ իրեն յատուկ զուրի գաւաթ մը:

16.—Գիշերօթիկ աշակերտներուն արգիլուած է նընշարան մտնել ու մնալ՝ որոշուած պահերէն դուրս:

17.—Ամէն աշակերտ պարտի կրկնակօշիկ մը կամ

(Զ 6 6 0)
47



հողաթափ մը ունենալ, երբ օդը անծրեւոտ եւ փողոցները ցեխուտ են: Անմաքուր կօշիկներով վարժարան մտնելը արգիլուած է:

18.—Ամէն աշակերտ պարտաւոր է հոգ տանիլ որ վարժարանին գոյքերը կամ առարկաները չվնասուին: Կամաւ կամ անզգուշութեամբ եղած ո եւ է վնասի վոխարէնը պարտաւոր են վճարել:

19.—Վարժարանի պարտէջին մէջ տունկերուն, ծառերուն կամ ծաղկներուն վնաս հասցնել բացարձակ արգիլուած է եւ կը նկատուի լորջ յանցանք:

20.—Զօրուանքի ատեն ծեռքի, ոտքի եւ այլ անշընորհ կատակներ խստիւ արգիլուած են:

21.—Խւրաբանչիւր դասարան կ'ունենայ իր կարգապահը-օրապահը, որ հոգ կը տանի դասարանի մաքրութեան, դասատետրերը կ'ստանայ, կը պահէ եւ տեղը կը յանձնէ:

22.—Ամէն աշակերտ պարտի հոգալ եւ ունենալ իր կաւիճը, մատիտը, մելանը եւն...

23.—Աշակերտները պարտաւոր են ամէն ժամանակ միշտ տրամադրելի ունենալ մելան, գրիչ, պարապթուղթ: Տետրակի մէջէն թերթ պատուել արգիլուած է:

24.—Աշակերտները պարտին մաքուր պահել իրենց քուրոր դպրոցական առարկաները, գրերն ու տետրակները: Նոյնպէս բացարձակ պահանջ է մարմնի մաքրութիւնը, որուն մէջ թերացող ցերեկեաները դիտողութեամբ՝ ծնողաց կը զրկուին, իսկ գիշերօթիկները կը պատժուին:

25.—Աշակերտները պարտին դասարաններու մէջ մնալ բացարձակ լուր ու հանդարտ, բարձրածայն մերտողութիւնը արգիլուած է:

26.—Սերտողութեանց եւ դասախոսութեանց պա-

հուն դասարանէն դուրս ելնելը արգիլուած է, բացի ա, եւ բ. կարգերէն: Բացառութիւններ բժշկական յանձնարարութեամբ միայն թոյլ կը տրուին:

27.—Դասախոսութեանց ընթացքին արգիլուած է մէկուն քովէն յուշել, դասախոսին կողմէ հարցում չուղղուած պատասխանել:

28.—Վարժարանին մէջ աւանդուած քոլոր ուսումները պարտաւորին են ամէն աշակերտի համար անխըտիր: Կամաւոր են միայն անգիտերէն, գերմ. լեզուները, ծեւագիտութեան եւ գործիական երաժշտութեան դասերը:

29.—Զեռային աշխատանքի համար կաւի, գաճի եւ այլ նիւթերու հայթայթումը կը պատկանի աշակերտներուն:

30.—Ազդիկները ծեռագործի պահերուն տարուան 5 ամիսը կրնան իրենց սեփական ծեռագործները աշխատիլ, մնացեալ 5 ամոււան ընթացքին պարտին աշխատիլ դպրոցի հաշւոյն:

31.—Ուեւէ աշակերտ չի կրնար մասնակցիլ վարժարանէն գուրս կազմուած մարմնակրթական, գեղարուեստական կամ մշակոյթային միութիւններու. այլ պարտաւոր է մտնել վարժարանի համանպատակ միութիւններուն մէջ:

32.—Աշակերտներու յանցանքներուն համար կը տնօրինուին հետեւեալ պատիմէները.

ա) Դիտողութիւն կամ յանդիմանութիւն ուսուցիչներու կամ դասարանի հսկողին կողմէ, իր կամ ուսուցիչ. ժողովի անունով.

1.—Առանձինն, 2.—Դասարանին մէջ:

բ) Յանդիմանութիւն Տնօրէնութեան կողմէ:

1.—Առանձին, 2.—Դասարանին մէջ, 3.—Ծնողական պատճեններուն ներկայութեան:

գ) Զրկում պայմաներէ, զբանքներէ, խաղերէ:
 դ) Վարժարանէ արտաքսում:

ՔԱՆՈՒԹԻՒՆՆԵՐ. ՎԻՃՎԱՑՈՅՑ ԿՄՐԳԱՓՈԽՈՅԵՐՆԵՐ.

1.—Երկու ամիսը անգամ մը, տարին 4 անգամ
ուսուցիչները կը կատարեն «զրաւոր պարտականու-
թիւններ» (Հոկտ., Դեկտ., Փետր., Ապրիլ վերջերը) եւ
Տնօրէնութեան կուտան իրենց նօթերը՝ զրաւոր ար-
դիւնքներուն հետ մէկտեղ։ Տարեգլխուն կը կատար-
ուին զրաւոր եւ բերանագի բնութիւններու։

2.-Դասերու եւ վարքի համար բարձրագույն նիշն է 6:

3.—Աշակերտներու ուսմանց մէջ ունեցած յառաջդիմութիւնը կը նշանակուի հետեւեալ ծանօթութիւններով. Քաջալաւ—6, Ցոյժ լաւ—5, Լաւ—4, Միջակ—3 Տկար—2, Ցողի—1:

4.-Վարքի աստիճանները կը նշանակուին հետեւեալ ծանօթութիւններով. Օրինակելի-6, Գովելի-5 կաւ-4, Միջակ-3, Պարսաւելի-2, Յորի-1:

5.—Կարգափոխութեան համար աշակերտ մը պէտք է ստանալ իբրըն ին. միօհն պատրաստուն. առ նուածի 4:

6.—Վերաբնութեան կրնան մասնակիլ այն աշակերտները, որոնց դասերուն ընդհ. միջինը 3էն պակաս չէ:

7.—Այն աշակերտը որ երկուքէ աւելի առարկա-ներու մէջ տկարէ, չի կրնար վերաբննելի ըլլալ:

8.—Հայ լեզուի սէց վերաքննութիւն չկայ:

9.—Կերաքննութեան մէջ անյաջող եւ քննութենէ չանցող աշակերտները կը կրկնեն իրենց կարգերը:

10.—Վերաբննութեան չմասնակցող աշակերտներու համար, բացառիկ պարագաներու մէջ, հարկ եղած կարգադրութիւնը կը ըլլայ Տնօրէնութեան կողմէ:

11.—Տարին երկու անգամ ծնողաց կամ պաշտպաններուն կը զրկուին Տնօրէնութեան կողմէ տղոց վարքի եւ ուսմանց վիճակացուցները, ուր արձանագրուած կ'ըլլան:

ա) Աշակերտին Ֆիզիքական վիճակը, հասակին, կուրծքին, ծանրութեան, չնչառութեան չափերը, տեսողութեան, առողջական վիճակը:

բ) Բարոյական-իմացական վիճակը, վարքը, մաքրութիւնը, վարուելակերպը, մտքի կարողութիւնները:

գ) Ուստան վիճակը, ուստած առարկաներու մէջ եր ստացած միջին թիւերն ու յառաջդիմութիւնը:

գ) Ընտանեկան-ընկերական վիճակը, ուր ծնողք կամ պաշտպանը պարտին գրել իրենց դիտողութիւնները եւ դարձնել Տնօրէնութեան:

ՊԱՏՈՒՅՑ ՅԻՇԱՏԱԿՈՒԹԵԱՆ ՄՐՑԱՆԱԿՆԵՐ

1.—Իւրաքանչիւր երկամսեայ զրաւոր պարտականութեանց արդիւնքին համեմատ պատույ լիւատակուրեան կ'արժանանան այն աշակերտները, որոնց ընդհմիջինը ծէն վեր է:

2.— Վարուց եւ բարոյական կրթութեան համար պատույլ լիշտակութեան կ'արժանանան այն աշակերտները որոնց կարգապահութիւնը, քաղաքավարութիւնը եւ ընդի. կրթական-բարոյական վիճակը անթերի եղած է երկամսեայ ժամանակամիջոցին:

3.—Իւրաքանչիւր դասարանէ առաջնութեան կարգով երեք աշակերտի անունները կ'արձանագրուին պառույ Տախտակին վրայ, որ կը կախուի Տեսչարանը:

4.—Տարուան մէջ կրեք անգամ պատուոյ յիշատակութեան արժանացած աշակերտ մը կը վարձատրուի մրցանակով:

5.—Մասնաւոր մրցանակ կը տրուի:

ա) Այն աշակերտին որ ամենէն յաջող կը հանդիսանայ արտասանութեան եւ հրապարակախօսութեան մէջ.

բ) Այն աշակերտին որ գեղարուեստի եւ կամ մարզանքի մէջ յաջողագոյն կը հանդիսանայ:

ԱՇԱԿԵՐՏԱԿԱՆ ՄԻՈՒԹԻՒՆ

1.—Ճեմարանի սաներուն մէջ հաստատուած է Աշակերտական միութիւն մը, որուն պարտաւոր են մասնակցիլ Գ. Դասարանէն վեր բոլոր աշակերտները:

2.—Միութեան նպատակն է աշակերտներու իննաշարգացումը:

3.—Միութիւնը իր այս նպատակին հասնելու համար կ'ունենայ գրադարան, կը կազմակերպէ ներքին հանդէսներ, վիճաբանական ժողովներ, դասախոսութիւններ եւն.:

4.—Աշակերտական միութիւնը կ'ունենայ ընդհ. ժողով մը, վաշչութիւն մը, որոնք կը կառավարուին Տնօրէնութեան կողմէ նշանակուած ուսուցչի մը կողմէ:

5.—Աշակերտ. միութիւնը առաջիկային պիտի կրնայ ունենալ իր հանդէս-օրկանը.

6.—Միութեան անդամագրուող աշակերտները նիւթապէս կը մասնակցին շաբաթական նուազագոյն մեկ լելա բաժինով:

“ՃԵՄԱՐԱՆ ԹԻՄ,, ՖՈՒԹՊՈԼԻ ՄԻՈՒԹԻՒՆ”

Ճեմարանի հովանիին տակ կազմուած է «Ճեմարան Թիմ» ֆութպոլի միութիւն մը, Ֆիլիպէի Հ. Մ. Հ. Մ. անդամներէն կազմուած, որուն կ'անդամակցին Ճեմարանի աշակերտները, հակողութեամբ ներքին ուսուցչի:

Առաջիկային Ճեմարանը կ'ունենայ, զուտ իր աշակերտներէն բաղկացած ֆութպոլի խումբը, ինչպէս նաև իր Սկաուբական կազմակերպութիւնը:

ԳԻՇԵՐԱՅԻՆ ԵՒ ԿԻՐԱԿՆՈՐԵԱՅ ԴԱՍԸՆԹԱՑՔՆԵՐ

Ճեմարանին մէջ հաստատուած են արդէն գիշերային եւ կիրակնօրեայ դասընթացքներ, բաժնուած են ամսեայ դասախոսութիւններու:

Կ'աւանդուին Հայերէն, Պուլկարերէն, Ֆրանսերէն, Անգլիերէն, Գերմաներէն, Թուարանութիւն, Տօմարակալութիւն, Նկարչութիւն, Զեւագիտութիւն եւայլն:

Շաբաթական 1—3 պահ դասախոսութեամբ:

Կանոնաւոր կերպով հետեւողներուն, որոնք քըն-նութիւն կուտան մասնաւոր յանձնախումբի մը առջեւ, Տնօրէնութիւնը կուտայ մասնաւոր վկայաթուղթ մը:

ՀՐԱՄԱՐԱԿԱՅԻՆ ԵՒ ՆԵՐՓԻՆ ԴԱՍԱԽՈՍՈՒԹԻՒՆՆԵՐ

Աշակերտներու բարոյական ու մտաւոր մակարդակը բարձրացնելու, ծանօթութեանց պաշարը ճոխացնելու համար վարժարանը երբեմն երբեմն կ'ունենայ ընդհանուր աշակերտութեան տրուած բանախօսութիւններ վարժարանին ուսուցիչներուն, ծանօթանձնաւորութիւններու եւ Տնօրէնութեան կողմէ:

Այդ բանախօսութիւնները կը նաև ըլլալ նաեւ հրապարակային, ծնողներու կամ հասարակութեան համար:

ԹՂԹԱԿՑՈՒԹԵԱՄԲ ԴԱՍԱԽՈՍՈՒԹԻՒՆ

Յառաջիկայ տարեցրանէն սկսեալ ձեմարանը կը հաստատէ նաեւ Թղթակցութեամբ դասախոսութիւն մը հետեւեալ առարկաներուն վրայ.

- ա) Հայ լեզու,
բ) Հայ պատմութիւն,
գ) Թուաբանութիւն եւ Տօմարակալութիւն:

Այս մասին փափաքողներուն կը տրուին մանրա-
մասն ծանօթութիւններ եւ կը հազորդուին պայման-
ները:



«Ազգական գրադարան»



NL0055514

ՀԱՍՏ

ՏԵՂԵՆՈՒԹԻՒՆ ՄԵՍՐՈՊԻԱՆ ՀԵՄՈՒՐԱՅԻ

ուլ. Կիրիլ Նեմարիկ; քիւ 5

ՖԻԼԻՊ Պ. Ա.

(Պուլիարիա)

Direction

du Collège Mesropian

rue Kiril Nektarieff, N° 5

PHILLIPPOPLE

(Bulgarie)